ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբերի 2019 թվականի N:542-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԱՏԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N188-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի

ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի N432 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 3 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 12-ի նիստի թիվ 1 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արմեն Պետրոսյանի, Թաթուլ Մանուկյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Միշա Ղրզոյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Մարինե Կարապետյանի, Միքայել Ղաբուզյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Լիլիթ Հովհաննիսյանի, Շողակաթ Հովհաննիսյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գևորգ Ղումաշյանին, Արթուր Գրիգորյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Միշա Ղրզոյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Աննա Գրիգորյանին, Հռիփսիմե Հարությունյանին, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Նինա Գալստյանին, Քրիստինա Հովհաննիսյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

«Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N188-Ա որոշման հավելվածում «Պետրոսյան Արմեն», «Մանուկյան Թաթուլ», «Կարապետյան Մարինե», «Ղաբուզյան Միքայել», «Հովհաննիսյան Լիլիթ», «Հովհաննիսյան Շողակաթ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Ղումաշյան Գևորգ» «Գրիգորյան Արթուր», «Գրիգորյան Աննա», «Հարությունյան Հռիփսիմե», «Գալստյան Նինա», «Հովհաննիսյան Քրիստինա», բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ միասին է